Գրենական պարագաների գնումները նախարարություններում 2009-2011թ.թ.

2010թ.-ի նոյեմբերի 27-ին եւ 2011թ.-ի մայիսի 25-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցումներ ուղարկեց ՀՀ բոլոր նախարարություններին՝ խնդրելով հայտնել, թե որքա՞ն գումար է նախատեսվել 2010թ. եւ 2011թ. պետական բյուջեներով տվյալ նախարարության կարիքների համար գրենական պարագաների ձեռքբերման համար, որքա՞ն գումար է ծախսվել գրենական պարագաների ձեռքբերման համար 2009թ. եւ 2010թ.-ին: Նախարարությունների պատասխան գրությունների վերլուծությունը հնարավորություն տվեց պարզել, թե պետական կառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Մալբերի համակարգը ներդնելու շնորհիվ նախարարություններում նվազե՞լ են գրենական պարագաների համար ծախսվող գումարները եւ եթե այո, ապա որքանո՞վ են նվազել, թե Մալբերին այդ առումով գրենական ծախսերի ծավալների վրա որեւէ ազդեցություն չի ունեցել:

Նախարարություններից ստացված տեղեկությունների համեմատական վերլուծությանն անցնելուց առաջ նախ վերլուծենք 2011թ. մայիսին ուղարկված 18 հարցումներով խնդրված տեղեկությունների տրամադրման պայմանները՝ ինչպես են նախարարություններն այս անգամ կիրառել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, ինչ ժամկետներում են տրամադրել տեղեկությունները:

ԻԱԿ-ը հարցում ուղարկել է բոլոր 18 նախարարություններին, ի դեպ, որեւէ հարցում անպատասխան չի մնացել: Հիշեցնենք, որ ԻԱԿ-ի՝ 2010թ.-ի նոյեբերի 27-ի հարցումներին չէին պատասխանել միայն ՀՀ առողջապահության եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունները: Սակայն, ՀՀ առողջապահության նախարարությունն, այնուամենայնիվ, 16.05.2011թ.-ին՝ ավելի քան 5 ամիս ուշացումով, գրավոր պատասխանել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցմանը՝ տրամադրելով խնդրված տեղեկությունները, ինչպես նաեւ նշելով, որ պատասխանի ուշացման համար պատասխանատու աշխատակիցը ենթարկվել է կարգապահական տույժի: Նշենք նաեւ, որ ի տարբերություն նախորդ հարցումների՝ ԻԱԿ-ի նոր՝ 2011թ.-ի մայիսի 25-ին ուղարկված հարցմանը ՀՀ առողջապահության նախարարությունը լիարժեք պատասխան է տվել մայիսի 30-ին՝ հարցումն ուղարկելուց 5 օր անց: Այսինքն, եթե հաշվի առնենք հարցումը նախարարություն հասնելու համար անհրաժեշտ փոստային առաքման ժամկետը եւ հանգստյան օրերը, ապա նախարարությունը ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է 1-3 աշխատանքային օրվա ընթացքում: Այնինչ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը նախորդ հարցման նման անպատասխան էր թողել նաեւ ԻԱԿ-ի 25.05.2011թ.-ի հարցումը: 24.06.2011թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նույնաբովանդակ կրկնակի հարցումով երկրորդ անգամ դիմեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Վեց օր անց՝ հունիսի 30-ին, ԻԱԿ-ը նախարարությունից ստացավ լիարժեք գրավոր պատասխան:

Պատասխան գրությունների բովանդակությունը, գրավոր մերժում, հրում.

Ուղարկված 18 հարցումներից 1-ի դեպքում տեղեկատվության տրամադրումը մերժվել է, 1-ի դեպքում էլ հղում է արվել էլեկտրոնային կայքին, ինչը, մեր կարծիքով, պատշաճ հղում չէր: Մնացած 16 դեպքում ստացվել է լիարժեք պատասխան: ՀՀ պաշտպանության նախարարությունը գրավոր մերժել է տրամադրել խնդրված տեղեկությունները, իսկ ՀՀ բնապահպանության նախարարությունը հղում է արել էլեկտրոնային կայքին: Մնացած 16 նախարարությունները պատասխան գրություններով տրամադրել են ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները:

Մինչեւ նախարարությունների պատասխանների բովանդակությունը ներկայացնելը նախ անդրադառնանք տրամադրված մերժմանը եւ հղումին: ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի պատասխան Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցման, հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը նախաձեռնել է պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող գնումների գաղտնազերծման գործընթաց: Սակայն այդ աշխատանքները դեռեւս չեն ավարտվել, ինչը պայմանավորված է ՀՀ ԶՈՒ կարիքների համար իրականացվող գնումների վերաբերյալ տեղեկությունների ահռելի ծավալով, ինչպես նաեւ պետական եւ ծառայողական գաղտնիքի արտահոսքը բացառելու համար տեղեկության յուրաքանչյուր կատեգորիա մանրամասն վերլուծության ենթարկելու անհրաժեշտությամբ, ինչը ենթադրում է երկարաժամկետ եւ ծավալուն աշխատանք: Ուստի, ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները շարունակում են համարվել պետական եւ ծառայողական գաղտնիք: Միաժամանակ, պատասխան գրությունում նշված է, որ առաջիկայում ակնկալվում է ավարտել նշված աշխատանքները, որից հետո ՀՀ պաշտպանության նախարարության համար իրականացվող գնումները կկազմակերպվեն առավել թափանցիկ պայմաններով:

Ինպես նշվեց, ՀՀ բնապահպանության նախարարությունը ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է հղումով: Հատկանշական է, որ հղումն արված է ոչ թե ՀՀ բնապահպանության նախարարության, այլ ՀՀ կառավարության www.e-gov.am եւ ՀՀ ֆինանսների նախարարության www.minfin.am կայքերին: Նշենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը www.e-gov.am կայքի «Ինտերակտիվ բյուջե» բաժնում, որին հղում էր արել նախարարությունը, չգտավ 2009թ.-ի բյուջեով տվյալ նախարարության կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման համար բյուջեով հատկացված եւ ծախսված միջոցների մասին տեղեկատվություն: Ամեն դեպքում, ՀՀ ֆինանսների նախարարության կայքում պահաջվող տեղեկատվությունն առկա էր: Նշենք, սակայն, որ ՀՀ բնապահպանության նախարարության հղումը թեեւ արդյունքում բովանդակային առումով պատշաճ էր, քանի որ նախարարության նշած կայքում առկա էր խնդրվող տեղեկատվությունը, սակայն ձեւի առումով պատշաճ չէր, քանի որ նախարարության պատասխանում ապահովված չէր տեղեկատվության մատչելիության սկզբունքը. նախարարությունը չեր նշել, թե www.minfin.am կայքի ՝Պետական բյուջե՞ բաժնի կոնկրետ որ մասում (էլեկտրոնային փաստաթղթում) է առկա անհրաժեշտ տեղեկությունը, որը գտնելը ԻԱԿ-ից բավական ժամանակ պահանջեց, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության կայքում ՝Պետական բյուջեի մասին՞ 2009 եւ 2011թ.թ. ՀՀ օրենքների հավելվածներից յուրաքանչյուրը, որոնցում առկա էր անհրաժեշտ տեղեկությունը, կազմված էր 25-ից ավելի առանձին էլեկտրոնային փաստաթղթերից: Հետեւաբար, ՀՀ Բնապահպանության նախարարության հղումը պատշաճ համարվել չի կարող:

Գրենական պարագաների ձեռքբերման համար ՀՀ նախարարությունների 2009, 2010, 2011թ.թ.-ի բյուջեով նախատեսված եւ 2009, 2010թթ.-ին ծախսված գումարների համեմատական վերլուծություն.

2010թ.-ից ՀՀ բոլոր նախարարություններում գործում է Մալբերի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Այս համակարգի նպատակներից մեկն է նաեւ կրճատել փաստաթղթաշրջանառության համար անհրաժեշտ գրենական պիտույքների վրա ծախսվող գումարների ծավալը: Տեսնենք, թե որքանով է արդարացրել իրեն այս ծրագիրը եւ արդյոք փոխվել են գրենական պարագաների (թուղթ, գրիչ, ծրար, թղթապանակ եւ այլն) ձեռքբերման համար հատկացվող եւ ծախսվող գումարները Մալբերի համակարգի ներդրումից հետո (2010- 2011թ.թ.):

Համեմատության համար նախարարություններին բաժանենք 4 խմբի, որոնցում կներկայացվի 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում գրենական պարագաների ձեռքբերման համար բյուջեով հատկացված գումարների համեմատությունը, քանի որ ծախսերը կաշկանդված են հատկացված գումարի չափով: Համեմատության մեջ հաշվված չեն ԻԱԿ-ի հարցումները մերժած, հղում արած, ոչ լիարժեք պատասխանած կամ հարցումն անպատասխան թողած նախարարությունները:

1. 2009թ.-ի համեմատ 2010 եւ/կամ 2011թ.թ.-ին գրենական պարագաների ձեռքբերման համար նախատեսվել է ավելի շատ գումար - ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն:
2. 2009թ.-ի համեմատ 2010 եւ/կամ 2011թ.թ.-ին գրենական պարագաների ձեռքբերման համար նախատեսված գումարը մնացել է գրեթե նույնը (այսինքն, եթե տարբերությունը չի գերազանցում 500.000 դրամը) - ՀՀ արտաքին գործերի նախարարություն:
3. 2009թ.-ի համեմատ 2010 եւ/կամ 2011թ.թ.-ին գրենական պարագաների ձեռքբերման համար նախատեսվել է ավելի քիչ գումար - ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի, ՀՀ արդարադատության, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի, ՀՀ տրանսպորտի եւ կապի, ՀՀ քաղաքաշինության նախարարություններ:
4. Այս խմբում ներկայացված են նախորդ 3 խմբերից որեւէ մեկին չպատկանող նախարարությունները - ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (2009թ.-ի համեմատ 2010թ.-ին նախատեսված գումարն աճել է, իսկ 2011թ.-ին նախատեսվածը՝ նվազել), ՀՀ սփյուռքի նախարարություն (2009թ.-ի համեմատ 2010թ.-ին նախատեսված գումարը նվազել է, իսկ 2011թ.-ին նախատեսվածը՝ մնացել նույնը), ՀՀ ֆինանսների նախարարություն (2009թ.-ի համեմատ 2010թ.-ին նախատեսված գումարը աճել է, իսկ 2011թ.-ին նախատեսվածը՝ նվազել):

Այսպիսով, վերլուծված 15 նախարարություններից 9-ի դեպքում է միայն, որ Մալբերի համակարգի ներդրումից հետո գրենական պարագաների համար հատկացվող գումարները նվազել են, 1 դեպքում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության դեպքում այդ գումարի չափը մնացել է նույնը, 1 դեպքում՝ մի տարի նվազել են, մյուս տարի՝ մնացել նույնը, 2 դեպքում՝ մի տարի նվազել են, մյուս տարի՝ աճել, 2

դեպքում Մալբերիի ներդրումից հետո էլ գրենական պարագաների համար հատկացվող գումարները աճել են: Եթե այս ցուցանիշներն արտահայտենք տոկոսային հարաբերակցությամբ, ապա Մալբերիի շնորհիվ գրենական պարագաների ձեռքբերման ծախսերը կրճատվել են միայն 60%, իսկ 40% կամ աճել են, կամ մնացել նույնը:

Նախարարությունների պատասխանները ներկայացված են ստորեւ բերված աղյուսակում: Այն ներառում է նաեւ նախորդ հարցման պատասխանների արդյունքները:

Նշենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը բովանդակության առումով առանձնանում էր մյուսներից. նախարարությունը նախատեսված եւ ծախսված գումարները ներկայացրել էր ոչ թե մեկ ամբողջ թվով, այլ ավելի մանրամասն՝ աղյուսակի տեսքով: Հարկ է նշել, որ ԻԱԿ-ի նախորդ հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը 2010 թ.-ին գրենական պարագաների ձեռքբերման համար նախատեսված եւ ծախսված գումարները ներկայացրել էր մեկ ամբողջ թվով, որը ամենաշատն էր բոլոր նախարարությունների համեմատությամբ՝ 47.329.900 դրամ նախատեսված եւ 29.688.800 դրամ ծախսված գումար: Արդյունքում, ԻԱԿ-ի վերլուծության հրապարակումից հետո ԶԼՄ-ների հրապարակումներում ՀՀ ֆինանսների նախարարությանը հատկացված գումարի մեծությունը մնացել էր չմեկնաբանված, ինչը կարող էր հասարակության մոտ երկիմաստ, ոչ դրական տպավորություն թողնել: Այս անգամ, նախարարությունը ոչ միայն ներկայացրել է առավելագույնս լիարժեք պատասխան, այլ նաեւ պարզաբանելով նախատեսված գումարների ծախսերը՝ բացառել է որեւէ կամայական կամ երկիմաստ մեկնաբանություն:

Անվանումը	**2009թ. բյուջեով նախատեսված /հազար դրամ/**	**2009թ. փաստացի ծախս /հազար դրամ/**	**2011թ. բյուջեով նախատեսված /հազար դրամ/**
Թուղթ (A4, A3, ԱՅՊՈՒ)	20813.0	15549.9	11760.0
Գրիչ	110.0	109.5	182.0
Ծրար	2788.5	2313.1	2454.0
Թղթապանակ (արագակար, թղթապանակ, ֆայլ, թղթապանակ ՖՆ անվանումով)	1074.0	909.0	1214.0
Թղթապանակ (ռեգիստատոր)			

Ժամկետները.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան պետք է

տրվի այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել է փոստով՝ 2011թ.-ի մայիսի 25-ին՝ չորեքշաբթի օրը: Ուստի, ժամկետների մասին ճիշտ պատկերացում կազմելու համար պետք է նկատի ունենալ նաեւ փոստային առաքման համար պահանջվող 1-2 օրը, ինչպես նաեւ հանգստյան օրերը: Ամեն դեպքում, անճշտություններից խուսափելու համար ժամկետները հաշվարկելիս որպես հիմք ընդունվել են հարցումներն ուղարկելու օրը եւ պատասխան գրության ծրարի վրա փոստային ծառայության կնիքի վրա նշված՝ պատասխան գրությունն ուղարկելու օրը:

Ժամկետները վերլուծելիս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դեպքում հաշվարկվել է ԻԱԿ-ի կրկնակի հարցմանն ի պատասխան նախարարության ուղարկած պատասխանի ժամկետը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ նախարարությունը պատասխանել է կրկնակի հարցմանը, որն ուղարկվել է 2011թ.-ի հունիսի 24-ին՝ առաջին հարցումն ուղարկելուց մեկ ամիս անց. այսինքն ԱԻ նախարարությունը ԻԱԿ-ի՝ 25.05.2011թ.-ի հարցմանը շուրջ մեկ ամիս չի պատասխանել:

Ժամկետների առումով այս անգամ լավագույնը ՀՀ առողջապահության նախարարությունն է. նախարարությունը ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է 5-օրյա ժամկետում: Ամենավատը ՀՀ գյուղատնտեսության նախարարության արդյունքն է, որը ԻԱԿ-ին պատասխանել է հարցումն ուղարկելուց 26 օր հետո:
ԻԱԿ-ի հարցմանը լիարժեք, սակայն ուշ է պատասխանել նաեւ ՀՀ պաշտպանության նախարարությունը. եթե 27.11.2010թ.-ի՝ ԻԱԿ-ի նմանատիպ հարցման մերժումը ՀՀ պաշտպանության նախարարությունը տրամադրել է ընդամենը 5 օրում, ապա 25.05.2011թ.-ի հարցմամբ խնդրվող տեղեկությունների տրամադրումը նախարարությունը մերժել է 23-օրյա ժամկետում: Ինչպես նշվեց՝ միակ հղումի հեղինակը ՀՀ բնապահպանության նախարարությունն է. www.e-gov.am եւ www.minfin.am կայքերին նախարարությունը հղում է արել գրավոր՝ 6-օրյա ժամկետում:

ԻԱԿ-ի 27.11.2010 եւ 25.05.2011թ.թ.-ի հարցումներին պատասխանելու ժամկետները համեմատելիս երեւում է, որ ԻԱԿ-ի 2 հարցումներին միեւնույն նախարարության պատասխանների ժամկետների տարբերությունը հիմնականում տատանվում է մի քանի օրվա մեջ՝ չի գերազանցում 10 օրը: Սակայն կան բացասական եւ դրական բացառություններ. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը վատացրել է հարցմանը պատասխանելու ժամկետների իր արդյունքը՝ այս անգամ հարցմանը պատասխանելով 26-օրյա ժամկետում՝ նախկին հարցման պատասխանի 9-օրյա ժամկետի դեպքում, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը իր արդյունքը վատացրել է 18 օրով՝ նախկինում 5-օրյա ժամկետում մերժում ներկայացնելու դեպքում այս անգամ գրավոր մերժումն ուղարկելով 23 օրում: ՏԱ հարցումներին պատասխանելու ժամկետների առումով նախկինի համեմատ իր աշխատանքը բարելավել է ՀՀ արդարադատության նախարարությունը, որը ԻԱԿ-ի նախկին հարցմանը պատասխանել է 23 օրում, իսկ 25.05.2011թ.-ի հարցմանը՝ 10-օրյա ժամկետում: Դրական է նաեւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության առաջընթացը. նախկինում ԻԱԿ-ի հարցումներն առհասարակ անպատասխան

թողնելու փոխարեն ԱԻՆ-ը այս անգամ 5-օրյա ժամկետում պատասխանել է ԻԱԿ-ի կրկնակի հարցմանը:

\Նախարարությունների պատասխաններն ամփոփենք թերեւս ամենադրական օրինակով. ՀՀ առողջապահության նախարարությունը, թեեւ ուշացումով, բայց տրամադրել է ԻԱԿ-ի 27.11.2010թ.-ի հարցումով խնդրված տեղեկությունները: Բացի այդ, ԻԱԿ-ի՝ 25.05.2011թ.-ի հարցմանը լիարժեք պատասխանելով 5-օրյա ժամկետում՝ ՀՀ առողջապահության նախարարությունը բոլոր նախարարությունների՝ 25.05.2011թ.-ի հարցմանը պատասխանելու ժամկետների առումով ցույց է տվել լավագույն արդյունքը: Նշենք նաեւ, որ ԻԱԿ-ի 2010թ.-ի նոյեմբերի 27-ի հարցմանը պատասխանած 17 նախարարությունները (հաշվի առնված չի ԻԱԿ-ի հարցումն անպատասխան թողած ՀՀ արտակարգ իրավիճակների նախախարարությունը) հարցումներին պատասխանել են միջինը (հաշվարկված է թվաբանական միջինով) 18-օրյա ժամկետում: Այս դեպքում հաշվի է առնված նաեւ ՀՀ առողջապահության նախարարության պատասխանի ժամկետը, որը գերազանցել է 5 ամիսը: Առանց առողջապահության նախարարության ցուցանիշի՝ մնացած 16 նախարարությունների՝ ԻԱԿ-ի հարցմանը պատասխանելու միջին ժամկետը 8 օր կլինի: Իսկ ԻԱԿ-ի 2011թ.-ի մայիսի 25-ի հարցմանը բոլոր նախարարությունները արդյունքում պատասխանել են, եւ նրանց պատասխանների միջին ժամկետը 12 օր է: